ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՍԱՍԱՆՅԱՆՆԵՐԸ

Բանասիր. գիտ. դոկտոր Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Պայկուլիի և Քաաբա ի Զարդուշտի արձանագրությունները թույլ են տալիս ճշտումներ մտցնել հայ ժողովրդի III դարի պատմության ժամանակագրության մեջ։

Քաաբա ի Զարդուշտի արձանագրությունը (KZ)[1] *գրված է Շապուհ I-ի մեծագործությունները հավերժացնելու համար։ Արձանագրության մեջ հիշվում է Վալերիանոսի պարտությունը, որը տեղի է ունեցել 260 թ. Խառանի և Եդեսիայի մոտ։ Պարսկերեն բնագրի XVIII և հունարեն XLI տողերում, ինչպես նաև պարսկերեն XX և հունարեն XVIII տողերում տրվում է Շապուհի որդու՝ Որմիզդ-Արտաշիրի անունը, որպես «Հայաստանի մեծ թագավոր»։*

Ագաթանգեղոսի և Խորենացու համաձայն պարսից Արտաշիր I Պապականի (224—241) դեմ դուրս է գալիս Խոսրով Մեծը։ Խորենացին նրան ժամանակակից է համարում հռոմեական կայսրերի, որոնք իշխել են 244—260 թթ.։ Այս անախրոնիզմը մնում էր անբացատրելի։ Խոսրովը, սակայն, պայքարել է Արտաշիրի դեմ, բայց ոչ՝ Արտաշիր Պապականի, որ Սասանյան առաջին գահակալն էր, այլ նրա թոռան՝ Որմիզդ-Արտաշիրի։

Խորենացու մոտ այդպես է ստացվել ակամա. նա օգտվում է Փիրմելիանոսից, բայց չէր կարող շրջանցել Ագաթանգեղոսին, որ անառարկելի էր հայ պատմիչների համար, և նրա հետևությամբ Խոսրովին ժամանակակից է դարձվել Արտաշիր I-ի։ Վերանձնավորված է պարսից արքան և ոչ՝ հայ թագավորը։

Խոսրովի գահակալության շրջանը պարզելիս հայոց արքայացանկը շատ բանով կարելի է ճշտել։

Զոնարասը գրում է, որ Շապուհը, Գալլոս կայսեր ժամանակ, 252/3 թ. նվաճեց Հայաստանը։

«Առ սովաւ (Գաղղեաւ) սկսան խլրտել Պարսիկք, որ հասին գրաւեցին զՀայասսան, ուստի փախեաւ արքայն (Հայոց) Տրդատ, այլ որդիք նորա անկան առ Պարսիկս»[2]*։*

Եթե հետևենք հայ պատմագիտական տրադիցիային, ապա դա Տրդատ Մեծն է, որովհետև Խոսրովը պայքարել է Արտաշիր I-ի դեմ, և նրա որդին

---

1 *Արձանագրությունը հայտնաբերվել է 1936—1939 թթ., պեղումների ժամանակ։ Լավագույն հրատարակություններ են՝* E. Honigmann, A. Maricq, Recherches sur les Res Cestae divi Saporis, Bruxelles, 1953; M. Springling, Third Century, Iran, Sapor and Kartir, Chicago, 1953; A. Maricq, Res Gestae divi Sapores, „Syria", Paris, XXXV, 1958.

2 *Զոնարաս, Տարեգիրք ԺԲ—21, տե՛ս Յ. Տաշեան, Ագաթանգեղոս առ Գեորգայ Ասորի եպիսկոպոսին, Վիեննա, 1891, էջ 106։*

կարող էր առնչվել Շապուհ I-ի հետ, որ հաջորդեց Արտաշիրին։ Կա համաձայնության և ուրիշ եզր. Տրդատը նույնպես ապավինել է հռոմեական իշխանությանը։

Բայց այսքանը։ Տրդատը պետք է մանուկ լիներ, «մանկիկ մի փոքրիկ», որ «առեալ դայեկացն փախուցեալ («ի տղայութեան փախուցեալ»[3]) ի դուռն կայսեր ի կողմանս Յունաց»[4], իսկ Զոնարասի հիշատակած Տրդատը հասուն մարդ է, որի որդիները չհետևեցին նրան։

Այդ հանդամանքը բացատրելու համար զանազան վարկածներ են առաջադրվել։

Դեռ վաղուց, Չամչյանից առաջ, պատմաբաններն արդեն ենթադրում էին, որ կարող էր այդ Տրդատը Տրդատ Մեծը չլինել։ Չամչյանը համաձայն չէ. «Այս բանք յայլևայլ գրուցաց խառնեալ են և չունին ինչ ստուգութիւն»[5],— որոշում է նա։

Գուդշմիդը և Մարկվարտը Զոնարասի բնագրում ՠաՒՠՠ (որդիների) ընթերցվածը փորձում են ուղղել։ Գուդշմիդը առաջարկում է ՠՠՒՠՠ (քաղաքներ), իսկ Մարկվարտը՝ ՠաՒՠՠ (հորեղբայրներ)[6]։

Դա սրամիտ է, բայց ինչպես հետևում է KZ արձանագրությունից, խոսրովը գործել է ավելի ուշ և Զոնարասի հիշատակած Տրդատը չէր կարող նրա որդին լինել՝ Տրդատ Մեծը, այլ, թերևս, հայրը։ Հենց այդ Տրդատն է, որ

---

3 «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1909, Գ—36։

4 «Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», Երևան, 1957, էջ 72։

5 Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հատ. Ա, Վենետիկ, էջ 615։ Չամչյանը վկայաբերում է Տիզնմոնտիոսին, որ Մակրինոս կայսեր վարրի մեջ Տրդատ Մեծ և Տրդատ-Տիրիթից բացի հիշում է ևս երկու Տրդատ. «Զմինս դնէ յամի տեառն 217, պսակեալ ի Մակրինոս կայսերէ և զմիւսն յամի 252, որ վանեցաւ ասէ ի Շապհոյ արքայէն պարսից» (էջ 615—616)։ Տաշյանը, Աննինսկին, Մանանդյանը և ուրիշներ. տարբերակելով Զոնարասի հիշատակած Տրդատին Տրդատ Մեծից, նրան նույնացնում են Մակրինոսի թագադրած Տրդատի հետ (տե՛ս Տաշյան, Ագաթ., էջ 106—107։ А. Анинский, Древние армянские историки как исторические источники, Одесса, 1899, էջ 43։ Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Ա., Երևան, 1957, էջ 85։

Տրդատ I-ից բացի Կ. Թումանովը ճանաչում է ևս երեք Տրդատ, ժամանակագրական այսպիսի հաջորդականությամբ. Տրդատ II՝ 216/7—252, Տրդատ III՝ 287—293 («տրոհված Հայաստանի» արևմտյան հատվածում), 293—298 («վերամիավորված Հայաստանում») և Տրդատ IV կամ Տրդատ Մեծ, Խոսրով II-ի որդին՝ 298—330 (տե՛ս C. Toumanoff, The Third Century Armenian Arsacids. A Chronological and Genealogical commentary, „Revue des études Arméniennes", VI, 1969, էջ 255, 274)։

6 Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft (ZDMG), 31, էջ 48—49 և ZDMG, 49, էջ 652։ Մոմղենը Զոնարասի ընթերցումը ուղղում է անորոշ ձևով, «Օրինական թագավոր Տրդատը փախավ հռոմեացիների մոտ։ Թագավորական տան մյուս անդամները անցան պարսիկների կողմը» (Т. Моммзен, История Рима, Москва, 1949, էջ 387)։ Խալաթյանցը հետևում է Մոմղենին. «Պատանի Տրդատը (III) Արշակ II-ի (նույնպես Խոսրովի) որդին, որ թագավորում էր 238 թ., փախավ հռոմեացիների մոտ այն դեպքում, երբ հայկական թագավորական տան մյուս անդամները հանձնվեցին հաղթողին։» (Г. Халагян, Очерк истории Армении, 1910, էջ 238)։ Աստուրյանը և Քասունին հակված են ընդունելու Մարկվարտի ուղղումը (Աստուրյան, Քաղաքական վերաբերություններ ընդմեջ Հայաստանի և Հռովմայ, Ս. Ղազար, 1912, էջ 243, «Հանդես Ամսօրյայ», 1914, ԻԸ, էջ 401)։ Այդ առթիվ դիտողություններ ունեն Նյոլդեքեն, Տուրնեբիզը (Nöldeke, Aufsatze zur persischen Geschichte, Leipzig, 1887, էջ 93; Tournebize, Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1910, էջ 130, 802) և ուրիշներ։

երկար ժամանակ հաջողությամբ պայքարեց Արտաշիր I արքայի դեմ, և երկիրը մնաց աննվաճ։

Սասանյանների քաղաքական նկրտումներին դա հակառակ էր, և նրանք փորձեցին դիմել խարդավանքի։

Տրդատը փախչում է հռոմեացիների մոտ, իսկ նրա որդիները ընդունում են պարսից իշխանություն[7]։ Թերևս գահակալակցն պայքար։ Համենայն դեպս, նրանք չեն բաժանում իրենց հոր քաղաքական կոմնորոշումը։

Երբ Արտաշիրը գահը խլեց պարթևական վերջին արքայից, նախարարական որոշ տներ և ավագանին, որ հարազատ էին Արշակունիներին, եկան Հայաստան։ Այդ մասին վկայություններ ունեն և՛ օտար, և՛ հայ աղբյուրները[8]։ Բայց դինաստիական ատելությունը, իբրև զգացում, շատ ավելի թույլ էր և տեղի տվեց քաղաքական շահագրգռություններին։

Հայ գահակալը Սասանյաններին դիմագրավելու համար փորձում էր համախմբել պարթևներին, բայց ապարդյուն. «Դեսպան արարեալ,— գրում է Ագաթանգեղոսը,— զի իւրեանց տոհմայինքն ի թիկունս եկեսցեն... սակայն տոհմքն և ազգապետքն և նախարարքն և նահապետքն Պարթևաց ոչ լինէին ունկնդիր. զի միամտեալ և հաւանեալ և նուաճեալ էին ի տէրութիւն Արտաշրի, քան ընդ տէրութիւն իւրեանց ազգատոհմին և եղբայրութեանն»[9]։ Սասանյաններն էլ, իրենց հերթին, պարթևական տների նկատմամբ ցուցաբերում էին ինչ-որ հանդուրժողականություն։

Քաղաքական պայքարի և ուժերի վերախմբավորման այս պահերին I համընկնում Խոսրովի և՛ գահակալումը, և՛ վախճանը։

Խոսրովը Տրդատ II-ի որդիներից էր, որ լուղեկցեց նրան և դա, անշուշտ, դեր խաղաց Խոսրովի թագադրման համար։ Նա իշխանության է հասնում պարսիկների համաձայնությամբ կամ թողտվությամբ, և նրա գահակալության սկիզբը պետք է համարել նույն 252/3 թ.։ Մեզ անհայտ է, Խոսրովը ինչ չափով է պայքարել Սասանյան Բրանի դեմ։ Այն, որ ավանդում է Ագաթանգեղոսը և հետո անցել է հայ պատմիչներին, թերևս վիպական տարր ունի, բայց վերաբերում է ավելի շատ նրա հորը՝ Տրդատ II-ին[10] և քիչ՝ նրան։ Ամեն դեպքում Խոսրովի իշխանությունը կարճ եղավ։

Գոթերը ներխուժել էին Փոքր Ասիա, իսկ պարսիկները շարունակում էին իրենց հաղթական երթը Եփրատի ափերից շատ հեռու։ 256 թ. Արևելք է գալիս Վալերիանոսը։ Թերևս Խոսրովը հակվում է նրան, որ ճակատագրական եղավ։ Այդպիսի համոզման կարող է բերել Խորենացին։

Ագաթանգեղոսը պատմում է, որ Խոսրովին սպանեց պարթև Անակը,

---

7 Ս. Տ. Երեմյանը, հենվելով Զոնարասի այդ տեղեկության վրա, գրում է. «Տրդատ III-ի որդիների մի մասը մնրժել էր հոր հռոմեասեր քաղաքականությունը և մնացել էր Հայաստանի պարսկական հատվածում, իսկ մյուսները, նախարարների զգալի մասի և Տրդատ II-ի հետ, անցել էին Մեծ Հայքի հռոմեական մասը»։ Նա կարծում է, որ Հայաստանի հռոմեական մասում շարունակեց թագավորել Տրդատ II-ը (մինչև 273 թ.), որին հաջորդեց Խոսրովը (273—287)՝ «Տրդատ Մեծի հայրը» («Լրաբեր», 1975, № 1, էջ 14, 21)։

8 C Dion. LXXX, «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, Բ—ՀԲ, ՀԳ։ Ագաթ. Բ—28։

9 Ագաթ.. Ա—20։

10 Խոսրովի վարքը վիպական գույն ստացավ V դարի պատմիչների կողմից իբրև Տրդատ Մեծի՝ առաջին քրիստոնյա թագավորի հայր։

որին ուղարկել էր հենց ինքը՝ արքան և խոստացել «ազգի ազգի պատիւս և պարգեւս և վարձուց հատուցմունս»[11]։

Նա գալիս է Խոսրովի մոտ իբրև ապստամբ, որ չի ընդունում Սասանյան իշխանությունը. «Իբրև ետես թագաւորն Հայոց՝ ցնծացեալ ել ընդ առաջ նորա և մեծաւ խնդութեամբ ընկալաւ զնա»[12]։ Դա շատ հավանական է։

Եղիշեի մոտ, սակայն, այլ հիշողություն է պահված։ Թեոդոս կայսեր հղած նամակում ասված է, որ Տրդատը տղա ժամանակ փախավ հունաց կողմերը «ի հայրասպան մարդախողիսող հօրեղբարցն իւրոց»[13]։

Ուրեմն Խոսրովին սպանել են եղբայրները։ Դա նույնպես հավանական է։ Նրանք արդեն պարսկական կողմնորոշում ունեին։ Մենք այդ գիտենք Զոնարաւից[14]։

Ամեն դեպքում, եղբայրները թե Անակը, միևնույն է, քանի որ Անակը եղբայր էր որպես տոհմակից, «նահապետ պարթևաց տէրութեանն»։ Եվ իզուր չէ, որ հայ պատմիչները դա ընդունել են որպես եղբայրասպանություն։

Խորենացին Խոսրովի մահը դնում է Վալերիանոսի ժամանակ, Դա տեղի է ունեցել կայսեր գերությունից թերևս մի փոքր առաջ։

Ժամանակագրական այս տվյալները չեն ուզում ընդունել և՛ այն պատմաբանները, որոնք Ագաթանգեղոսի և Խորենացու հետևությամբ գտնում են, որ Խոսրովը Արտաշիր I-ի ժամանակակիցն է, և՛ նրանք, որ մերժում են այդ։

Եթե Խոսրովը Արտաշիրի ժամանակակիցն է և սպանվել է նրա խարդավանքով, ապա չէր կարող որևէ առնչություն ունենալ Վալերիանոսի հետ. Արտաշիրը գահակալել է 224—241 թթ., իսկ Վալերիանոսը՝ 256—260։

Բայց եթե Տրդատ II-ն էր Արտաշիր I-ի ժամանակակիցը, ապա նրա փախուստից հետո հիշատակվում է մի ուրիշ թագավոր՝ Արտավազդ։

Տրիբելլիոս Պոլլիոնը գրում է, որ Վալերիանոսի գերության առթիվ հայոց թագավոր Արտավազդը նամակ է հղել Շապուհին։ Հայոց թագավոր Արտավազդը։ Խոսրովի համար տեղ չի մնում։

Արտավազդի ինքնության շուրջ հեղինակները տարամիտում են, բայց նրա գահակալությունը ընդունվում է աներկբա[15]։

Իսկ ի՞նչ են ասում հայ պատմիչները։

---

11 Ագաթ., Բ—24։

12 Ագաթ., Բ—29։

13 Եղիշե, էջ 72։

14 Մոմզենի և Խալաթյանցի կարծիքով դավադրությունը վերաբերում է Խոսրովի հորը՝ Տրդատ II-ին (տե՛ս Моммзен, История..., էջ 387, Халатянц, Очерк..., էջ 339)։

15 Աննինսկին, Խալաթյանցը և Մանանդյանը Արտավազդի գահակալությունը դնում են 252—272/3 թթ., Երեմյանը՝ 252/3—261/2։ Պերպերյանը և Թումանովը գտնում են, որ Արտավազդը նույնն է Սասանյան Որմիզդ-Արտաշիրի հետ։ Թումանովի ժամանակագրական սխեմայի համաձայն Արտավազդը (Որմիզդ-Արտաշիրը) իշխել է 252—271 թթ. (Аннинский, Древние..., էջ 135; Халатянц, Очерк..., էջ 339; Манандян, Քննական..., Բ, էջ 95։ Երեմյան, Նախշ-ի-Ռուստեմի «Քաաբա ի Զարդուշտի» հուշարձանի արձանագրության վկայությունները Հայաստանի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 2, էջ 69։ Նույնի՝ Հայաստանի թագավորական վիճակը Արտավազդ V-ի ժամանակ (252/3—261), ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1975, № 1, էջ 13—21։ Պերպերյան, Որմիզդ-Արտաշիր մեծ արքա Հայաստանի, «Չվարթնոց», II, 1944, էջ 167—173։ C. Toumanoff, The Third Century Armenian Arsacids. „Revue", էջ 253, 274).

Ագաթանգեղոսը գրում է, որ Խոսրովի մահից հետո ոչնչացնում են Անակի տոհմը, ապա դալիս է պարսից թագավորը. «Զօրաժողով լինէր, խաղայր գնայր, ասպատակ սփռէր զկողմամբք Հայաստան աշխարհին»[16]։ Խոսրովի ոստանության և Որմիզդ-Արտաշիրի կողմից Հայաստանը վերագրավելու միջև ինչ-որ ժամանակ է անցել։ Դա ավելի հստակ է Խորենացու մոտ։

«Նոյն այր ասէ, եթէ յետ սուսերահարն լինելոյ Խոսրովու, միաբանեալ նախարարք Հայոց ածեն իւրեանց յօդնականութիւն զզօրս Յունաց, որ ի Փռիգիայ՝ Պարսից ընդդիմանալ և պահել զաշխարհս»[17]։

Բայց հույները չեն կարողանում օգնել. «Վասն որոյ համարձակաբար արշաւեալ ի մեզ Արտաշրի, և զզօրս Յունաց փախստական արարեալ, գերելով զյոլով մասն աշխարհիս՝ յաւեր դարձուցանէ»[18]։

Ինչպես տեսնում ենք, հայերը Խոսրովի մահից հետո փորձել են կազմակերպել դիմադրություն և Խոսրովի մահվան ու Հայաստանը Արտաշիրի կողմից գրավելու միջև ժամանակ է անցել։

Արտավազդը նամակ է գրում Շապուհին, գերված Վալերիանոսին ազատելու համար, ուրեմն նրա գերությունից հետո, բայց առաջ՝ քան արձանագրությունը, որովհետև արձանագրության մեջ թագավոր է հիշված Արտաշիրը։ Այդ սահմանագիծը կարող է լինել 259—261 թթ.։ Վալերիանոսը գերվել է 259-ի վերջին կամ 260-ի սկզբին, իսկ արձանագրությունը չէր կարող 262 թ. ավելի ուշ գրվել։ Այն ուղղակի Շապուհի հաղթանակի մասին հրովարտակ է, որ պետք է հետևեր հաղթանակին։ Արտավազդն իր տեղը զիջել է Շապուհի որդուն հենց Վալերիանոսի պարտության պատճառով։

Ասվեց, որ Խոսրովը սպանվել է Վալերիանոսի գերումից ոչ շատ առաջ, և Խոսրովի սպանությունից մինչև Արտաշիրի գահակալությունը հենց այն ժամանակահատվածն է, որ նշում են երկու պատմիչները՝ Ագաթանգեղոսը և Խորենացին և որ մնում է բաց։ Այդ բացն է լրացնում Արտավազդը։

Խոսրով II-ի որդին, որ գահաժառանգն էր, երկրից հեռանում է նախարարական տների հետ, Որմիզդ-Արտաշիրի գալուց հետո միայն. «Յորմէ զաղթեալ նախարարքն Հայոց, հանդերձ ազգաւն Արշակունեաց ի Յոյնս ապաւինէին. յորոց մի էր և Արտաւազդ Մանդակունի, որոյ առեալ զՏրդատ որդի Խոսրովու՝ ի դուռն կայսեր հասուցանէր»,— գրում է պատմիչը (Բ—ՀԷ)։

Խոսրովի մահից մինչև Արտաշիրի գահակալումը գահի օրինական ժառանգորդը մնացել էր երկրում, ուրեմն նոր գահակալ պետք չէր։ Խոսք կարող էր լինել միայն խնամակալության մասին։ Այդ դերը կատարում էր Արտավազդ Մանդակունին։ Նա է հոգ տանում Տրդատի կյանքի համար և փախցնում «ի դուռն կայսեր» և, թերևս, հենց նա Տրիբելլիոս Պոլլիոնի հիշատակած Առաւավազդ թագավորի հետ նույնն է։

Բայց ինչպե՞ս մեկնել Տրիբելլիոս Պոլլիոնի հաղորդումը։

Այդ բնագիրը մտնում է «Վարք կայսերաց» („Scriptores Historiae Augustae, SHA) շարքի մեջ, որն ունի կիսապատմագրական, կիսաստեղծագործական բնույթ. կենսագրական տեղեկություններ են կամ

16 Ագաթ., Գ—35։
17 Խորենացի. Բ—ՀԶ։
18 Նույն տեղում։

գրույցներ, ուր պատմական իրողությունները գունավորված են ստեղծագործական երևակայությամբ և հեղինակներն իրենց ազատ են զգում։ Տրիբելլիոս Պոլլիոնին ոչինչ չէր խանգարի Արտավազդին անվանելու հայոց թագավոր, իսկ դա պետք էր։ Պոլլիոնը ուզում է ցույց տալ, թե ինչպիսի մեծ արձագանք ունեցավ Շապուհի կողմից Վալերիանոսի գերեվարումը։ Բայց երբ նրան ազատելու համար նամակ է գրում թագավորի խնամակալը, և ոչ թե թագավորը, դա չի կարող տպավորիչ լինել[19]։

Որ գործ ունենք ոճավորված պատմական փաստի հետ, կարելի է նկատել և նամակից.

«Արտավազդ հայ թագավորը Շապուհին ուղարկեց այսպիսի նամակ. «Համակիր եմ քո փառքին, բայց վախենում եմ, որ դու ոչ այնքան հաղթանակ շահեցիր, որքան սերմանեցիր նոր պատերազմներ։ Վալերիանոսին ետ են պահանջում և՛ նրա որդին, և՛ թոռը, և՛ հռոմեական զորավարները, և՛ ամբողջ Գալլիան, և՛ ամբողջ Աֆրիկան, և՛ ամբողջ Իսպանիան, և՛ ամբողջ Իտալիան, և՛ բոլոր ցեղերը, որոնք ապրում են Իլլիրիկումում, Արևելքում և Պոնտոսում, որոնք հռոմեացիների դաշնակիցն են կամ նրանց հպատակը։ Դու գերի վերցրիր մի ծերունու, բայց ամբողջ երկրի բոլոր ցեղերին դարձրիր քեզ կատաղի թշնամիներ և, հնարավոր է, և մեզ, որ քեզ ուղարկեցինք օժանդակ ջոկատներ։ Մենք ձեր հարևաններն ենք և միշտ տուժում ենք ձեզ համար ձեր բախումների ժամանակ»[20]։

Հաղթող արքայից արքային ոչ պիսի նամակ չէր գրի մի երկրի թագավոր, որ նրա իշխանության տակ էր։ Դա ավելի է արտահայտիչ ընդհանուր կոնտեքստի մեջ։ Պոլլիոնը բերում է երկու ուրիշ նամակ, որ ստորագրել են Բեղսոդոսը և կատիշների թագավոր Բաղենոսը։ Այդ նամակները նման են իրար և գրված են նույն ոճով։ Եթե դրանք առհասարակ պատմական են, ապա խստորեն ենթարկված են գեղարվեստական մշակման։ Այդ դեպքում Արտավազդը, իհարկե, կարող էր կոչվել թագավոր։

Արտավազդը Տրդատի խնամակալն էր և չուներ թագավորական ստատուս[21]։

Խորենացին Խոսրովի մահից մինչև Տրդատի թագավորելը կոչում է «ժամանակս անիշխանութեան», որի մասին նա քաղում է հույն պատմիչ Փիրմելիանոսից. «Իսկ որ ինչ զկնի մահուանն Խոսրովայ մինչև ցթագաւորութիւնն

---

19 Հետաքրքիր է Կայսերաց գրքի հեղինակներից մեկի՝ Վոպիսկոսի գրույցը Հռոմի պրեֆեկտ Յունիուս Տիբերիանոսի հետ, որ պատվիրում է նրան գրելու Ավրելիանոսի կենսագրությունը. «Տիբերիանոսն ասաց, որ Պոլլիոնը շատ բան անփույթ, շատ բան չափազանց համառոտ է շարադրել։ Իսկ ես առարկեցի ասելով. թե չկա ոչ մի գրող, համենայն դեպս պատմիչ, որ որևէ բան հնարած չլիներ։ Ես բերեցի... Լիրիոսի, Սալյուստիոսի, Կոռնելիոս Տակիտոսի և վերջապես Թրոգոսի օրինակները։ Այդ ժամանակ Տիբերիանոսը, համաձայնելով ինձ հետ և թափահարելով ձեռքը, կատակով ասաց. «Գրիր, ինչ քեզ հարմար է։ Դու ազատ կարող ես ասել, ինչ ցանկանում ես, բանի որ քո ստի ուղեկիցները պատմական պերճախոսության վարպետներ են, որոնցով մենք հիանում ենք» (SHA, XXVI, II, 1—2)։

20 SHA, XXII, III, 1—3.

21 Այիշանը, հարազատորեն հետևելով Խորենացուն, գրում է. «Ցայնժամ թուին Արտավազդայ, որ զերծոյցն զՏրդատ ի կոտորածէ հայրենի տանն, ոչ միայն դաստիարակ կացեալ նմա յօտարութեան, այլև իբրև զյուխ իշխանաց առաջնորդեալ Հայոց թափեալ զաշխարհն, զեթ առ ժամանակ մի. մինչև թագաւոր իսկ Հայոց կոչել զնա օտարաց» («Այրարատ», էջ 374)։

Տրդատայ ի ժամանակս անիշխանութեանն պատմէ՝ ստոյգ համարելով երկրորդեմք քեզ համառօտ բանիւք»[22]։

Այդ ժամանակ Հայաստանի թագավոր էր Որմիզդ-Արտաշիրը և ապա, Պայկուլիի արձանագրության համաձայն, Ներսեհը։ Խորենացին դա համարում է անիշխանության շրջան. նրա մոտ Արտաշիրը անձնավորում է Արտաշիր Պապականին, որ Պարսկաստանի տիրակալն էր և չէր կարող միաժամանակ նստած լինել հայկական գահին։ Այդպես է մտածում պատմիչը և գրում, թե Արտաշիրը «կալաւ զաշխարհս մեր որպէս զմի յաշխարհացն իւրոց պարսիկ գործակալօք»։

Ինչևէ, Խորենացին անիշխանության ժամանակը հաշվում է Արտաշիրի տիրապետության շրջանից։ Որմիզդ-Արտաշիրի և նրա հաջորդի իշխանությունը միասին, «մինչև ցթագաւորելն Տրդատայ», նա թվում է «ամս բսան և վեց և ամ մի» քսանյոթ տարի։ Արտաշիրը, համաձայն KZ արձանագրության տվյալների, «կալաւ զաշխարհս մեր» 261 թ.։ 261-ից եթե հաշվենք 27 տարի, անում է 287։

Դա համընկնում է Խորենացու ուղղակի տվյալին, որ նա բերել է իր Բ գրքի ՁԲ գլխում. «Քանզի ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան, վասն որոյ և մանրախուզիւ քննեալ՝ գտաք զթագաւորելն Տրդատայ յերրորդ ամի Դիոկղետիանոսի»[23]։

Դիոկղետիանոսը կայսր հռչակվեց 284 թ., բայց մինչև 285 թ. դեռ ապրում էր նախկին կայսրը՝ Կարինոսը և չէր ուզում գիջել իր իշխանությունը։ Այդպիսով Դիոկղետիանոսի երրորդ տարին անում է 286 կամ 287։ Հավաստվում է Խորենացու հաղորդումը Տրդատի գահակալության տարեթվի մասին. «Յերրորդ ամի Դիոկղետիանոսի»։

Ժամանակագրական տեղեկություններ ունի և Սեբեոսը։ Նա Տրդատի գահակալությունը դնում է Դիոկղետիանոսի 15-րդ տարում, որ հասնում է մինչև 298 թ.։

Աննինսկին և ակադ. Մանանդյանը ճիշտ են համարում Սեբեոսին և մերժում են Խորենացուն։ Մանանդյանը գտնում է, որ Խորենացու ժամանակագրական սխեման կազմված է գլխավորապես Ագաթանգեղոսի վկայությունների և Սեբեոսի սխալաշատ ժամանակագրական ցանկերի հիման վրա, իսկ Սեբեոսի ճիշտ թվականները «հավանորեն նրան հայտնի են եղել թանկարժեք մի այլ աղբյուրից»[24]։ Թերևս։ Բայց եթե պեղենք անհարիր շերտերը, Սեբեոսի տվյալները համաձայն են KZ արձանագրությանը և հաստատում են Խորենացուն։

Սեբեոսը գտնում է, որ Տրդատը գահակալել է Դիոկղետիանոսի տասնհինգերորդ տարում։ Նրա մոտ սակայն այլ է Դիոկղետիանոսի առաջին տարին։ Այդ մասին պատմիչն ասում է ԽԴ գլխում. «Յամի ԺԳ՝ երեքտասներորդի կենարարին և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի թագաւորէ Դիակղետիանոս, երեք ընկերաւքն թագաւորութեանն Հռովմայեցւոց»[25]։

«Յամի ԺԳ» Քրիստոսի 261 թ. է։ Հռոմեական թվագրության նոր փուլն

---

22 Խորենացի, Բ—Հն։

23 Խորենացի, Բ—ՁԲ։

24 Մանանդյան, Քննական..., Բ, էջ 104—105։

25 «Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, էջ 132—133։

սկսվում է 249-ից[6]։ Ուրեմն համաձայն Սեբեոսի Դիոկղետիանոսը կայսր հռչակվեց 261 և ոչ՝ ինչպես իրականում, 284 թ., 23 տարով ավելի վաղ, և նրա 15-րդ տարին անում է 275, որ դառնում է Տրդատի գահակալության սկիզբը։

Ինչպես տեսնում ենք, Աննինսկու վարկածը Սեբեոսի ժամանակագրության մեջ ոչ մի հաստատում չունի։

Թերևս ժամանակագրական աղյուսակները Սեբեոսինը չեն, այլ անանուն մի հեղինակի, ինչպես կարծում են որոշ բանասերներ և, հնարավոր է, Անանունը չի օգտվել հռոմեական թվականից։ Բայց հենց աղյուսակներում էլ դեպքերը շփոթված են 20—25 տարով։ Այսպես, Կարոսի և նրա հաջորդի՝ Դիոկղետիանոսի մասին Անանունը գրում է.

«Եւ ապա՝ ժամ եղև պատերազմ մեծ ի մէջ Խառանու և Ուրհայի, հարկանեն և վանեն զդարն Հունաց, և մեռանի Կարոս ի պատերազմին հանդերձ միով որդւովն Կարինոսիւ։ Եւ ի նմին ամի թագաւորէ Յունաց Դիոկղետիանոս»[27]։

Կարոսը Արևելք է գալիս 282 թ. և մտնում Հայաստան։ Վահրամ II-ը խաղաղության դեսպաններ է հղում, բայց նա չի ուզում ընդունել, շարժվում է Միջագետք, արագորեն նվաճում Սելևկիան, հասնում Տիգրոն։ Կարոսի վարած պատերազմները միայն հաղթական են։ Նա չի սպանվել պատերազմում, այլ կայծակնահար է եղել Տիգրիսի ափերին կամ խոցվել յուրայինի դաշույնից, իսկ որդին՝ Կարինոսը, սպանվել է երկու տարի հետո, 285 թ. Մյուսիայում, Մարգոսի տակ, Դիոկղետիանոսի դեմ մղված ճակատամարտում։ Այն, ինչ պատմում է Անանունը, նրանց հետ կապ չունի։

KZ արձանագրության մեջ ասված է, որ Շապուհը պարտության մատնեց Վալերիանոսի կողմից առաջնորդվող հռոմեական զորքերին Խառանի և Ուրհայի մոտ։ Հենց նույնն է Անանունի ժամանակագրության մեջ. «Եւ ապա՝ ժամ եղև պատերազմ մեծ ի մէջ Խառանու և Ուրհայի, հարկանեն և վանեն զդարն Հունաց»։

Ինչպես տեսնում ենք, Կարոսը շփոթված է Վալերիանոսի հետ և 20—25 տարով ետ է գնացել։

Խառանի և Ուրհայի պատերազմը եղել է 260 թ.։ Անանունը այդ ժամանակ է դնում Կարոսի վախճանը և որովհետև իսկապես Կարոսին հաջորդել է Դիոկղետիանոսը, ուրեմն նա, համաձայն Անանունի, գահակալել է 261 թ., ինչպես բուն Սեբեոսի մոտ ուղղակի հաշվով[28]։

Հենց այդտեղ Անանունը կամ Սեբեոսը, հիշելով Տրդատի հոր՝ Խոսրովի

---

26 Հռոմեական թվագրությունը հաշվվում է Հռոմի հիմնադրումից, այն է՝ մ. թ. ա. 753 թ.։ Մեկ հազարամյակ հետո, որ լրացավ մ. թ. 248 թ., սկսվեց հռոմեական թվագրության երկրորդ փուլը։ 249 թ. համարվեց հռոմեական թվագրության առաջին տարի։

Սեբեոսի մոտ տարօրինակաբար այն կոչվում է Կենարարի թվական։ Մալխասյանը դրան ուշադրություն չի դարձնում (տե՛ս «Էջմիածին», 1944, հունվար, էջ 22—26), Լ. Ս. Խաչիկյանը կարծում է, որ բնագրի մեջ «Երերտասանեներորդի Կենարարին և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի» նախադասությունը հետագա հավելում է։

27 Սեբեոս, էջ 15։

28 Կողմնակիորեն նկատենք, որ դա կարևոր հանգամանք է Սեբեոսի և Անանունի հարաբերության հարցում։

մահը, անմիջապես ավելացնում է. «Եւ տիրէ ի վերայ աշխարհիս Հայոց Արտաշիր որբայ պարսից, ամս ԺԱ»[29], տասնմեկ տարի։

Շապուհ I-ի մահից հետո Որմիզդ-Արտաշիրը գահը ժառանգեց 272 թ. և, եթե տասնմեկ տարով ետ գնանք, ապա Հայաստանը տիրել է 261 թ.։ Այստեղ, Սեբեոսն ինքն է հաստատում KZ արձանագրության տվյալը և նրանից վրստահություն ձեռք բերում։ Իսկ Խորենացու մոտ «ժամանակս անիշխանութեան» կամ Արտաշիրի գահակալությունը Հայաստանում սկսվում է նույն թվականից (261), և 27 տարի հետո՝ 286/7-ին թագ է ստանում Տրդատը։

Աղբյուրները համերաշխ են։

Վերադառնում ենք ավանդույթին։ Միշտ չէ, որ ավանդույթի խախտումը կարելի է դիտել իբրև գիտական խիղախումն։

Սեբեոսի և Խորենացու ժամանակագրության միջև մնում է մի անհամաձայնություն։ Սեբեոսի հաշվումներով Տրդատի գահակալությունն ընկնում է ոչ 298, բայց և ոչ 286/7 թ., այլ՝ 275-ին, որ Ավրելիանոսի վերջին տարին է, իսկ 276-ին կայսր է հռչակվում Պրոբոսը։

Ուխտանեսը թողել է մի հետաքրքիր դիտողություն. «Գրեցաք ի մերումս պատմութեան միանգամ և երկիցս յաղագս Տրդատայ թագաւորելոյն, թէ երբ և յորում ժամանակի եղև։ Բայց ոչ միաբանէին ընդ միմեանս Զենոբ և Մովսէս վասն նորա. զի Զենոբ ի Պռոբայ ասէ թագաւորեալ Տրդատայ. և թագաւորեալ յորժամ զգթացն արար ձերբակալ զթագաւորն. և նա երախտահատոյց լեալ Տրդատայ՝ թագ եդեալ թագաւորեցոյց զնա, և առաքեաց զօրօք իւրովք ի Հայս։ Իսկ Մովսէս ի Դիոկղետիանոսէ ասէ թագաւորեալ, վկայէ և այսմ գիրք Կայսերացն»[30]։

Զենոբը գտնում է, որ Պրոբոսն է թագ տվել Տրդատին։ Պրոբոսի կողմից Տրդատի թագադրության մասին հիշում է նաև Վարդան պատմիչը. «Պռոբոս, ամս 6։ Ոմանք ասեն, թէ սա պսակեաց զՏրդատ»[31]։ Այդ մասին մատենագրական վկայությունները բավական շատ են, որ կարելի լիներ անտեսել։

Հետևենք իրադարձություններին։

Վալերիանոսի դերումից հետո պարսկական զորքերը գրավելով Անտիոքը հասնում են Կիլիկիա և Կապադովկիա։ Հայկական գահին տիրում է Արտաշիրը։ Հռոմեական Արևելքում հրապարակ է գալիս նոր ուժ՝ Պալմիրան (Թադմոր), որի իշխան Օդենատոսը խլում է Պարսկաստանի գրեթե բոլոր արևմտյան նվաճումները։ Նա հասնում է մինչև Տիգրոն։

«Ամենայն հավանականությամբ այդ ժամանակ Հայաստանը ևս վերադարձվեց Հռոմի իշխանության տակ»,— գրում է Մոմզենը։ Այդպես են ենթադրում և ուրիշներ։ Բայց հենց ինքը Մոմզենը ծանոթագրում է. «Այդպիսի եզրակացություն կարելի է անել ելնելով իրերի ընդհանուր դրությունից, բայց փաստական ապացույց չունենք։ Այդ դարաշրջանի կայսերաց կենսագրություններում հայերը սովորաբար հիշվում են Հռոմից անկախ սահմանային ժողովուրդների մեջ (Vita Valer., 6, Frig tyr, 30, 18, Vita Aurel., 11, 27, 28, 41)։ Բայց բոլոր այս հիշատակությունները բովանդակում են կենսագիրների

29 Սեբեոս, էջ 15։

30 Ուխտանես Եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 111։

31 «Մեծին Վարդանայ Բարձրաբերդցւոյ Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 56։

բոլորովին անվստահելի բաժիններում, որոնք նպատակ ունեն դունազարդելու իրականություններ»[32]։

Իրերի ընդհանուր դրությունից թերևս կարելի է ենթադրել, բայց աղբյուրները ոչ մի հիմք չունեին հակառակը վկայելու։ Հայաստանը Հռոմից անկախ ներկայացնելը կայսերաց կենսագիրների համար իրականություններ դունազարդել չի նշանակում։

Օդենատոսը չի նեղել Հայաստանին, հավանաբար նրա մեջ տեսնելով ապագա դաշնակցի Հռոմի դեմ, որի հետ բախումն անխուսափելի էր։ Եվ երբ Ավրելիանոսը արշավեց Պալմիրայի վրա, վերջինիս դաշնակիցն էր և Հայաստանը։

Զենոբիան, որ Օդենատոսի կինն էր և հաջորդը, պարտվում է, և վերականգնվում են Հռոմի իրավունքները ասիական սահմաններում։

Հենվելով «Կայսերաց գրքի» վրա, Մանանդյանը ենթադրում է, որ Ավրելիանոսի հաղթանակի առթիվ Հայաստանը ևս անցավ Հռոմի տիրապետության տակ կամ ընդգրկվեց նրա ազդեցության ոլորտը։ Բայց բերենք մեզ հետաքրքրող հատվածները՝

«Հաղթողը և արդեն ամբողջ Արևելքի տերը, որ շղթաների մեջ էր պահում Զենոբիային, պարսիկների, հայերի և սարակինոսների հետ բանակցությունների ժամանակ, գործի բերումով, որ ելնում էր այդ շրջանի դրությունից, սկսեց ցուցաբերել չափազանց մեծ բարձրամտություն և գոռոզություն» (SHA, XXVI, XXVIII, 4)։

«Այդպիսի կոչումն անվայել թվաց այն դեպքում, երբ նա արդեն անվանվում էր գոթական, սարմատական, հայկական, պարթևական և ադիաբենական» (SHA, XXVI, XXX, 5)։

«Նա տվեց մեզ Գալլիան, նա ազատագրեց Իտալիան, բարբարոսների լծից ու ստրկությունից նա փրկեց վինդելիկներին, նրա հաղթանակներով վերականգնվեց Իլլիրիկումը, վերադարձվեց Հռոմի օրենքներին Թրակիան, նա բերվեց մեր իշխանության տակ Արևելքը, որ հեծում էր, ինչպիսի ամոթանք, կնոջ լծի տակ, պարսիկներին, որոնք մինչ այդ պարծենում էին Վալերիանոսի սպանությամբ, նա ջախջախեց, փախուստի մատնեց, խորտակեց։ Սարակինոսները, բլեմմիները, ակսոմիտները, բակտրիացիները, սեռերը, վրացիները, աղվանները, հայերը, նույնիսկ հնդկական ժողովուրդները հարգում էին նրան գրեթե ինչպես աստծո» (SHA, XXVI, XLI, 8—10)։

Այստեղ չկա այնպիսի բան, որ թույլ տա ենթադրելու, թե Հայաստանը անցավ Հռոմի իշխանության տակ։ «Ամբողջ Արևելքի տեր» դարձվածքը անորոշ է։ Արևելքը կարող էր ընդգրկել տարբեր սահմաններ։ Մի ուրիշ անգամ նա Ավրելիանոսին հայտարարում է «ամբողջ աշխարհի տեր» (SHA, XXVI, XXXII, 4)։ Ավրելիանոսը, հաղթելով Պալմիրային, իրեն կարող էր համարել և նրա դաշնակիցների՝ պարսիկների և հայերի հաղթող և ստանալ «հայկական» մականունը։ Եթե դրանով մտածենք, որ Հայաստանը ընկել էր հռոմեական գերիշխանության տակ, ապա նույնը կարելի է ասել և Պարսկաստանի մասին, բայց այդպիսի բան չի եղել։ «Հարգում էին նրան գրեթե ինչպես աստծո» նախադասությունը բարոյական իմաստ ունի։ Հարգողների մեջ թվում է նաև բակ-

32 Моммзен, История..., էջ 397։

ուրիացիներին և Հնդկաստանի ժողովուրդներին, որոնք Հռոմի տիրապետության տակ լինել չէին կարող։

Այս ընդհանուր գովերգական շեշտը ավելի շուտ ասում է, որ Զենոբիայի դեմ Ավրելիանոսի հաղթանակը Արևելքի քաղաքական սահմանագիծը չփոխեց[33]։

Խորենացին հաղորդում է, որ Վալերիանոսից հետո, Կլավդիոս II-ից մինչև Փլորիանոս («Փղորիանոս») կայսրերը ոչինչ չկարողացան անել «հուպ ընդ հուպ փոխանորդելով դմիմեանս»[34], և Արտաշիրը ամրացավ Հայաստանում։

Խորենացին ճիշտ է տալիս նրանց հաջորդականությունը, հիշելով նույնիսկ կայսրերի, որ մեկ տարուց պակաս են իշխել։ Նա ունեցել է ստույգ աղբյուր, որը համապատասխանում է արտաքին պատմիչների տեղեկություններին։ Իսկ Արտաշիրը, ինչպես հայտնի է KZ արձանագրությունից, Որմիզդն է, Շապուհի որդին։ Այնպես որ այստեղ անախրոնիզմ չկա։ Իրադարձությունները անսխալ արտացոլված են պատմիչի մոտ։

Ավրելիանոսը, օգտվելով Զենոբիայի դեմ տարած իր հաղթանակից, թերևս կարող էր Եփրատն անցնել։ Նա այդպիսի փորձ չարեց, որովհետև Հռոմի եվ-

---

33 Մանանդյանը բերում է և ուրիշ փաստարկներ. Զոսիմոսը հաղորդում է, թե 272 թ. հաղթություններից հետո Ավրելիանոսը միացրել է Հռոմին Միջագետքը (Zosimos, 60, 1)։ Դա թերևս դեռ չի նշանակում, որ Հայաստանն էլ է միացել։ Եթե այդպես լիներ, Միջագետքի հետ կհիշեր և Հայաստանը։ «Ուշագրավ է նաև,— շարունակում է Մանանդյանը,— որ Ավրելիանոսի հաղթահանդեսին մասնակցած ժողովուրդների այն շարքում, որ անկախ էին Հռոմից, չեն հիշատակված հայերը (Vopiscus, Avrelianus, 33)։ Այդ, ինչպես կարծում են, կարող է դարձյալ մի նշան համարվել, որ Հայաստանն այդ ժամանակ գտնվում էր Հռոմի հովանավորության տակ» (99)։ «Ինչպես կարծում ենք,— Մանանդյանը նկատի ունի Աստուրյանին և նշում է նրա երկը։ Բայց Աստուրյանի մոտ ասված է. «Միջագետք դարձյալ հռոմեական ազդեցության տակ մտավ։ Հայաստան հավանաբար պարսկական ազդեցության շրջանակին մեջ մնաց, առանց որ այդ ազդեցությունը շատ մեծ բլար նման վիճակի մը մեջ, ինչպես հաճախ Օգոստոսի ժամանակ,— և Ավրելիան Պարսից և Հայոց հետ իբր անկախ և իբր ոչ հռովմայեցի ժողովուրդներ վարվեցավ։ Ո՛չ հաղթանակի մեջ տարվող և ո՛չ ալ հաղթանակի հանդիսին ներկա գտնվող ժողովուրդներու մեջ հայոց անունը կհիշատակվի, որ անով կարելի է մեկնվիլ, թե հռովմ դանոնք իբր իրեն հովանավորյալները կնկատեր. թեև իրականին մեջ այնպես չէին» (էջ 249)։

Եթե հայերը չեն հիշվում ո՛չ հաղթանակի մեջ տարվող և ո՛չ էլ հաղթանակի հանդեսին ներկա գտնվող ժողովուրդների մեջ, շատ ավելի կարող է նշանակել և, թերևս, ուղղակի նշանակում է, որ նրանք Հռոմի ազդեցությունից դուրս էին։

Բայց և՛ Աստուրյանը, և՛ Մանանդյանը հիմք չունեին Վոպիսկոսի բնագրում հայերին փնտրելու հաղթանակի հանդեսին ներկա գտնվող ժողովուրդների մեջ, որովհետև Վոպիսկոսը առհասարակ նրանց չի հիշում, այլ խոսում է միայն կերիների և նվաճված ժողովուրդների մասին։ «Առջևից գնում էին բան փիղ, 200 վարժեցված դանագան վայրի կենդանիներ՝ Լիբիայից և Պաղեստինից, չորս վագր, ընձուղտներ, իշայծյամներ և ուրիշ նման դաղաններ. լրիվ կարգով. ութ արյուր զույգ գլադիատորներ, չհաշված բարբարոսական ցեղերից գերիներին, բլեմմիներ, ակսոմիտներ, արաբներ՝ երջանիկ Արաբիայից, Հնդիկներ, բակտրիացիներ, իբերներ, սարակինոսներ, պարսիկներ,— բոլորը իրենց երկրների ստեղծագործություններով. գոթեր, ալաններ, ռոկսոլաններ, սարմատներ, ֆրանկներ, սվեվներ, վանդալներ, գերմաններ, որպես գերի, կապված ձեռքերով։ Նրանց մեջ առջևից քայլում էին և Պալմիրա քաղաքի կենդանի մնացած ամենաանվանի դեմքեր և եգիպտացիներ ի պատիժ նրանց ապստամբության» (SHA, XXVI, XXXIII, 4—5)։ Այդ առթիվ Վոպիսկոսն այլևս ոչինչ չի գրում։

34 Խորենացի, Բ—ԼԶ։

ռոպական տիրապետություններում դեռ դրություն անկայուն էր»[35]։ Ավրելիանոսը շարժվեց Արևելք, այս անգամ Պարսկաստանի դեմ, 275 թ. միայն, բայց սպանվեց ճանապարհին, Բյուզանդիոնի մոտ։

Խորենացին ասում է, որ նրա հաջորդ Տակիտոսը «ընդդէմ Արտաշրի գայ զկողմամբք Պոնտոսի», բայց ապարդյուն. «Արտաշիր հասեալ ի Տակիտոս՝ ի փախուստ դարձուցանէ»[36]։

Դրությունը չի փոխվում և Պրոբոսի ժամանակ։ Նա 282 թ. իր լեգեոնները ուղղում է Արևելք, պարսիկների դեմ և նույնպես սպանվում ճանապարհին։

Զոսիմոսը 276 թ. համար, որ Պրոբոսի առաջին տարին է, նշելով հռոմեական Արևելքի սահմանները, Հայաստանը և Միջագետքը դուրս է թողնում։

Կարոսը բախվեց պարսիկների հետ և հասավ մինչև Տիգրոն։ Բայց արշավանքները ընդհատվեցին նրա խորհրդավոր մահով։ Լեգեոնները հեռացան Տիգրիսի ափերից, և նորից երկու տերությունների միջև սահմանն անցավ Եփրատով։

Արևելքի քարտեզը վերագծվում է միայն Դիոկղետիանոսի օրոք։ Նա ապարդյուն չթողեց իր նախորդի հաղթանակները։ Նրա եռանդուն գործողությունները սարակինոսների դեմ տպավորիչ էին, իսկ պարսկական արքունիքում նոր էր ավարտվել պայքարը գահի համար։ Համենայն դեպս, առանց պատերազմի խոհամիտ կայսրը կարողացավ լուծել Արևելքի խնդիրը՝ Միջագետքը և Հայաստանը ներգրավելով հռոմեական ազդեցության ոլորտը։

Եթե հենվենք Մամերտինի (կամ Եվմենիոսի) վրա, դա տեղի է ունեցել Դիոկղետիանոսի առաջին տարիներին, 289 թ. առաջ[37]։ Դա լիովին համաձայն է Խորենացուն, որ Տրդատի գահակալությունը դնում է Դիոկղետիանոսի երրորդ տարին։

Հետևելով պատմական իրադարձություններին, տեսանք, որ Վալերիանոսի դերությունից մինչև Դիոկղետիանոսի՝ պարսիկների հետ համաձայնության գալը (261—286/7), Հայաստանը դուրս էր Հռոմի ազդեցությունից, և այն ետ խլելու հռոմեացիների բոլոր փորձերը մնում էին ապարդյուն։ Դեպի Արևելք երթի մեջ կայսրերը հաճախ կորցնում էին իրենց կյանքը[38]։ Դա հենց այն 27 տարին է, որ Խորենացին կոչում է «ժամանակս անիշխանութեան»։

Այսպիսով, բոլոր տվյալները հաստատում են պատմիչի վկայությունները։

Մանանդյանը գտնում է, որ Դիոկղետիանոսի և Պարսկաստանի միջև կայացված համաձայնության մասին պնդումները «վիճելի են և դժվար ընդունելի»։ «Պատմագիտական ուսումնասիրություններում,— գրում է նա,— օրինակ Մոմզենի, Տաշյանի, Խալաթյանցի և ուրիշների երկերում մատնանշվում

---

35 «Ավրելիանոսը իր լեգեոնները չանցկացրեց նրա (Եփրատի) վրայով, քանի որ այդ ժամանակ Գալլիան Բրիտանիայի և Իսպանիայի հետ միասին դեռևս հրաժարվում էին նրա իշխանությունն ընդունել»։ (Моммзен История..., էջ 397)։

36 Խորենացի, Բ—ԺԷ։

37 Panegyrici latini. XII. II (289 թ.), III (290 թ.), V (297 թ.), XII (289 թ.)։ Տե՛ս Моммзен, История..., էջ 398։ Schiller, Geschichte des röm Kaiserrechs unter der Regierung des Nero 1872. Berlin, էջ 142։ Աստուրյան, Քաղաքական..., էջ 254—255։

38 Դրանից արդեն վախ հարուցող նախապաշարում էր առաջացել, իբր մի ճակատագրական ոչ հռոմեական տիրակալին թույլ չի տալիս Տիգրոնից այն կողմ անցնելու, և Կարոսը կայծակնահար եղավ, որովհետև համարձակվել էր կարել ճակատագրով որոշված սահմանը (SHA. XXX. IX. 1)։

է, որ 283—286 տարիներում խաղաղության դաշն էր կնքված Վահրամ II-ի հետ և ըստ այդ դաշնագրության Հայաստանը տրվել էր Հռոմեական կայսրության: Սակայն այն պնդումները, որ հիմնված են Դիոկղետիանոսին վերաբերող ներբողական ճառերի կցկտուր ու մութ վկայությունների վրա, վիճելի են և դժվար ընդունելի»[39]:

Panegyrici latini-ի տվյալները «կցկտուր ու մութ վկայություններ» չեն: Դրանք ներբողական ճառեր են, որ արտասանվել են կայսեր կենդանության ժամանակ: Կարող են, թերևս, գունազարդվել դեպքերը և չափազանցվել, բայց հնարվել՝ ոչ. դա լավ չէր ընդունվի իրազեկ ունկնդիրների կողմից: Խոսքը վերաբերում է կարևոր մի խնդրի, որ քառորդ դարից ավելի ծանրացած էր Հռոմի առաջ՝ Պարսկաստանի հետ Հռոմի քաղաքական հարաբերություններին: Դիոկղետիանոսի և Վահրամ II-ի միջև ինչ-որ պայմանավորվածություն եղել է, այլապես հռետորը, որքան էլ ուզենար, չէր կարող իր հյուսած դափնուն մի շյուղ ավելացնել:

«Ավելի հավանական կարելի է համարել Աստուրյանի և Աննինսկու կարծիքը,— շարունակում է Մանանդյանը,— որոնք ենթադրում են, որ վերոհիշյալ թվերին օրինավոր դաշինք կնքված չի եղել»[40]:

Աննինսկին՝ այո, բայց Աստուրյանը նման կարծիք չի հայտնել: Մանանդյանի նշած էջը (253) վերաբերում է Կարոսին[41]. այնտեղ Աստուրյանը գրում է. «Դիոկղետիան դինված բազկով շատ անգամներ ինքդինքը ցուցուց Ասորիքի մեջ և հալածեց Սարակինոսներու խմբերը, որոնք հռովմեական երկիրը անհանգիստ կընեին: Իր ներկայությամբ և իր զենքերուն ուժովը կայսրը այնպես սարսափեցուց տակավին միշտ ներքին շփոթություններով զբաղած Վռամը, որ սա բարեկամության անունը ստանալու համար ամեն բանի մեջ տեղիք տվավ: Այս առթիվ տեղի ունեցավ եթե ոչ հանդիսավոր դաշինք մը, գեթ համաձայնություն մը, որուն համեմատ թագավորը իրականապես ճանչցավ, թե մինչև Տիգրիս տարածվող երկիրները հռովմեական են»[42]:

«Բարեկամության անունը ստանալուն համար ամեն բանի մեջ տեղիք տվավ»,— այս արտահայտությունը Աստուրյանը քաղում է Սվմենիոսից (Paneg. Max., 10, Paneg. lat.. II):

Աննինսկին գտնում է, որ Դիոկղետիանոսի և Վահրամ II-ի միջև դաշնագրություն տեղի չի ունեցել, և Միջագետքն ու Հայաստանը մնացել են Պարսկաստանի իշխանության տակ, Աստուրյանը՝ եղել է եթե ոչ դաշնագրություն, «գեթ համաձայնություն մը, որուն համեմատ» մինչև Տիգրիս տարածվող երկրները անցել են Հռոմին:

---

39 Մանանդյան, Քննական..., էջ 102: Մեզ մնում է անհասկանալի, թե ինչ հիման վրա է Մանանդյանը բերում 283—286 թվականները. Մոմզենը որոշակի թիվ չունի (Моммзен, История..., էջ 397—398), Տաշյանը այդ համաձայնությունը դնում է «286-ին վերջը» (Տաշյան, Ա, էջ 125), իսկ Խալաթյանցի մոտ խոսքը ոչ թե Դիոկղետիանոսի, այլ Կարինոսի դաշնագրության մասին է (Халатянц, Очерк..., էջ 345—346):

40 Մանանդյան..., Քննական..., Բ, էջ 102:

41 «Թեև Կարոսի պատերազմին ելքը հռովմայեցվոց նպաստավոր եղած էր, այսուհանդերձ օրինավոր դաշինք մը չկնքվեցավ երկու պետությանց մեջ, ուրեմն պարսիկք պաշտոնապես իրենց իրավունքներն չհրաժարեցան տիշյալ երկու աշխարհներու վրա» (Աստուրյան, Քաղաքական..., էջ 253):

42 Նույն տեղում, էջ 254:

Որ Դիոկղետիանոսի առաջին տարիներին խաղաղ համաձայնությամբ Միջագետքն ու Հայաստանը Պարսկաստանի գերիշխանությունից դուրս են մնացել, ցույց է տալիս մի շատ կարևոր աղբյուր՝ Ֆարկին— Տիգրանակերտի արձանագրությունը։

Արձանագրությունը հայտնաբերվել է 1899 թ. Լեման-Հաուպտի կողմից[43]։ Պատմագետները համաձայն են, որ այն վերաբերում է Տրդատ III-ին և ոչ Պապին, ինչպես կարծում էր Լեման-Հաուպտը։

Արձանագրությունը չափազանց խաթարված է և հատվածային, բայց ընդհանուր առմամբ կարելի է որոշ գաղափար ստեղծել։ Այն անպայման գրված է հեթանոս թագավորի կողմից (A₂ նախնիների երջանկության (բախտի)..., A₄ որպեսզի մեր բախտի..., A₅ աստված արքայից արքա..., B₂ աստվածների հոգատարությամբ և մեր բախտի..., B₄ աստվածների հոգատարությամբ և երջանկության..., B₅ աստված արքայից արքայի..., B₆ աստված արքայից արքան... D₅ քաղաքների, որոնց աստվածների հոգատարությամբ և օգնությամբ...)։

Արձանագրության մեջ խոսվում է հռոմեացիների Նեկրայում ինչ-որ ուժ ձեռք բերելու մասին։ Թագավորը պարսից արքայից հրովարտակ է ստանում, որ անակնկալ էր։ Քաղաքը մինչ այդ անցել էր պարսիկների կողմը («Ձեր քաղաքապետությունը և պատերազմում էր պարսիկների հետ իմ հոր դեմ», C₃)։ Թագավորն իբրև պատիժ քաղաքը հանձնում է իր զորքերի ձեռքը («Բայց պետք չէ գրավված բերդը սմայի թողնել։ Այդ իսկ պատճառով այն հանձնեցինք մեր զորքին, որպեսզի հանկարծ չհետևի ավելի մեծ խայտառակություն, կամ ինչ-որ մասը դարձյալ ապստամբի և պատերազմի», C₁, ₅)։

Արձանագրությունը, թերևս, պարսից արքայի հրովարտակի պատճենն է. «Հրամայեցինք ինչպես որ էր գրության մեջ փորագրել և ամրացնել», (D₆, ₇)։ Այդպես են վերջին տողերը։ Նույնը նա փորագրել է տալիս և ուրիշ քաղաքների դարպասներին։

Ամբողջ արձանագրությունից երևում է, որ ինչ-որ համաձայնություն է եղել պարսիկների և հռոմեացիների միջև, և Տիգրանակերտը հանձնվել է հայ թագավորին։ Բայց ե՞րբ և ի՞նչ հանգամանքներում։

III դարի վերջին տասնամյակներին, որ Տրդատի գահակալության հավանական շրջանն է, պատմագրության մեջ հիշվում է երեք համաձայնություն կամ դաշինք. Պրոբոսի (276—282) կամ Կարոսի (282—283) իշխանության ժամանակ, Դիոկղետիանոսի (284—305) առաջին տարիներին և Գալերիոսի հաղթանակից հետո, 297/8 թվականին։

Վոպիսկոսը հաղորդում է, որ Պրոբոսը խաղաղություն կնքեց պարսիկների հետ (SHA, XXVIII, 17—18)։ Նման տեղեկություն ունի և Սյունեսիոսը (De regno, c 18)։ Այդպիսի հաշտություն կարող էր լինել։ Դա թելադրում էր զոթերի վտանգը։

Սյունեսիոսը պատմում է, որ Կարինոսը (283—285), երբ Հայաստանի վրայով հասել էր Պարսկաստանի սահմաններին, նրանց հղած դեսպաններին հետ է ուղարկում։ Գուդշմիդը, Տաշյանը[44] և ուրիշներ կարծում են, որ դա նույնն

[43] C. F. Lehmann-Haupt. Armenien Einst und Jetzt. Berlin, 1910. էջ 111—119։ Արձանագրության հունարեն բնագրից օգտվել ենք Հ. Բարթիկյանի թարգմանությամբ։

[44] ZDMC. XXXI. 50. Տաշյան. Աղաթ., էջ 119։

է Վոպիսկոսի հաղորդման հետ և պետք է վերաբերի Պրոբոսին։ Մոմզենը գրում է. «Ինձ հասկանալի չէ, թե ինչու այդ պատմությունը կարելի է վերագրել Պրոբոսին, ինչպես դա մտածում է Գուդշմիդը։ Այդ պատմությունը Կարոսի պարսկական արշավանքին լիովին հարմար է դալիս»[45]։

Կարծում ենք Մոմզենի դիտողությունը տեղին է, և եթե անվան մեջ (Կարինոս; կա վրիպում, ապա պետք է լինի Կարոս, այլ ոչ՝ Պրոբոս։

Բայց դա չի մերժում Վոպիսկոսին, չնայած կա և ուրիշ առիթ։ Կենսագիրն այդ դեպքը պատմելիս՝ տալիս է Ներսեհի անունը, իսկ Պրոբոսի ժամանակ պարսից գահին էր Վահրամ II-ը։ Ներսեհը գահ բարձրացավ միայն 293 թ.։

Թվում է Վոպիսկոսի տվյալը պետք է ուղղել Սյունեսիոսի միջոցով, կամ անախրոնիզմը վերացնելու համար փոխադրել 293 թ. հետո, թերևս 297/8 թ.։ Բայց նկատենք մի ուրիշ հանգամանք։

1924 թ. Հերցֆելդը հրատարակում է Պայկուլիի արձանագրությունը, որը փորագրել է տվել Ներսեհը[46]։ Այդ հրատարակությունը մեզ չէր կարող օգնել բայց Հենինգի վերընթեռնման մեջ, 1952 թ., կա կարևոր մի լրացում. «Դեսպանը եկավ ինձ մոտ [ասելու],— գրված է այնտեղ,— կարող է նորին մեծությունն արքայից արքան Հայաստանից գնալ Իրանշահր և ընդունել աստվածներից իր նախնիների պատիվը, գահը, իրավունքը և իշխանությունը.... Եվ երբ տեսանք այդ նամակը, ապա հանուն Ահուրա Մազդայի և բոլոր աստվածների և Տիրուհու՝ Անահիտի, գնացինք Իրանշահր»[47]։

Ներսեհը 293 թ. Հայաստանից է գնացել գահը ժառանգելու։ Նույն արձանագրության մեջ նա իրեն կոչում է Հայաստանի թագավոր. «Ես Հայաստանի թագավորն էի»,— գրված է արձանագրության առաջին տողերում։

Անիշխանության շրջանում Խորենացին հիշում է միայն երկու Սասանյան գահակալ. Արտաշիր և նրա որդին։ Բայց 272 թ. Արտաշիրը կրեց արքայից արքայի թագը, իսկ որդին KZ արձանագրությունից բացի ոչ մի տեղ չի հիշվում։ Մատենագրական միակ տեղեկությունը հավանարար Խորենացու մոտ է։ Խորենացին նրան կոչում է Շապուհ և ասում, որ նա գահակալեց մեկ տարի։ Այդքան կարճատև ժամանակը և Շապուհի մասին պարսկական աղբյուրների հետագա լռությունը համաձայն են իրար, նկատել տալով, որ Խորենացին ճիշտ է և Որմիզդ-Արտաշիրի որդին հավանաբար վախճանվել է վաղաժամ։

Մինչև 273 թ. մարտ ամիսը Արտաշիրն իր դրամները թողարկում է «Հայաստանի մեծ թագավոր» մակագրությամբ[48], ուրեմն նրա որդին իբրև «Հայաստանի մեծ թագավոր» իշխել է 274 թ., և Ներսեհը նրան պետք է որ հաջորդեր 275-ին։

262 թ., KZ արձանագրության համաձայն, Ներսեհը թագավորն էր «Մակեդոնիայի, Թուրանի և Հնդկաստանի, մինչև ծովի ափերը»։ 276 թ. Վահրամ

---

[45] Моммзен, История..., էջ 397։

[46] E. Herzfeld, Paikuli. The Monument and Inscriptions on the Early History fo Sasanian Empire, vol. I—II, Berlin, 1924.

[47] W. Henning, A Farewell to the Khagan of the Aq-Aqataran. Տե՛ս Bulletin of the School of Oriental and African Studies, University of London, XIV, էջ 517—518։

[48] В. Г. Луконин, Культура Сасанидского Ирана, М., 1969, էջ 101—102։

I-ի մոտ Մանիի ընդունելությանը Կարտիրի հետ մասնակցում էր և «Սակերի թագուհին»։ «Դժվար է պատկերացնել,— գրում է Լուկոնինը,— որ Վահրամ I-ի պալատում նրա մերձավորների մեջ գտնվեր իրեն թշնամի Ներսեհի կինը։ Չէ որ Ներսեհը Վահրամ I-ին համարում էր գահի «ուղուրպատոր»[49]։ Եթե ճիշտ է Լուկոնինը, ապա պետք է ընդունել, որ Ներսեհը արդեն 276 թ. Սակերի թագավոր չէր և կրում էր «Հայաստանի թագավոր» տիտղոսը։ Համենայն դեպս, դա լիովին համընկնում է Խորենացու տվյալներին։

Այսպիսով, Ներսեհը 275/6 թ. փոխարինել է Որմիզդ-Արտաշիրի որդուն՝ Շապուհին (թերևս Որմզդակին, ինչպես ասված է KZ արձանագրության մեջ) և հաշտություն առաջարկել Պրոբոսին, որ նույն ժամանակներում՝ 276 թ., կայսերական ծիրանի հագավ։ Դրանով, թերևս, նա շտապում էր Հռոմի նոր կայսեր իր վերաբերմունքն արտահայտել և նրա կողմից ճանաչում ստանալ։ Բայց համաձայնություն Պրոբոսի և Ներսեհի միջև չեղավ, Մակեդերմոտի ենթադրությանը հակառակ[50]։ Դա պարզ է Վոպիսկոսի հաղորդումից։ Համաձայնություն տեղի է ունեցել Պրոբոսի և արքայից արքա Վահրամ II-ի միջև։ «Պարթևները հղեցին դեսպաններ, ընդ որում, խոստովանելով, որ վախենում են նրանից և խնդրեցին խաղաղություն,— գրում է Վոպիսկոսը,— Նա նրանց ընդունեց բարձրամտությամբ և ետ դարձրեց շատ ավելի վախեցրած»[51]։ «Եվ այդպես, պարսիկների հետ խաղաղություն կնքելով, Պրոբոսը վերադարձավ Թրակիա»,— ասված է շարունակության մեջ։ Թվում է, թե խոսքը համաձայնության գալու մասին է։ Երկու նախադասությունները, սակայն, միմյանց հետ ոչ մի կապ չունեն։

Նկատենք, որ Պրոբոսին հաշտություն են առաջարկել պարթևները, իսկ նա խաղաղություն է կնքում պարսիկների հետ։ Վոպիսկոսը պարսիկներին և պարթևներին տարբերակում է։ Նույն Պրոբոսի կենսագրության մեջ կարդում ենք. «էլ ինչ ասենք սարմատների, գոթերի, պարթևների, պարսիկների, ամբողջ մերձպոնտյան շրջանի մասին։ Ամենուր կգտնվեն Պրոբոսի մեծագործության փայլուն հետքերը»[52]։ Ինչպես տեսնում ենք, Վոպիսկոսը պարթևներին ու պարսիկներին թվարկում է իրար կողքի։ Այդպիսով, Պրոբոսը մերժել է ոչ թե պարսիկների, այլ պարթևների խաղաղության առաջարկը։ Պարթևներ ասելով՝ Վոպիսկոսը նկատի ունի Հայաստանը, որ պարթևական իշխանության վերջին հենարանն էր։ Արշակունիների տապալումից հետո Բրանից այստեղ էր տեղափոխվել պարթև ավագանին, և պարթևական տարրը քաղաքական աղդեցություն ուներ, անկախ այն բանից, թե ով էր գահակալը։

Պրոբոսը, ետ տալով Ներսեհի նվերները, գրում է. «Ես դարմանում եմ. որ այն ամենից, որ մերը կլինի, դու այնքան քիչ ես ուղարկել։ Տիրիր առայժմ բոլորին, ինչ քեզ ուրախություն է պատճառում։ Եթե մենք ցանկանանք ունենալու այդ ամենը, ապա մենք գիտենք ինչ ճանապարհով կարող ենք ձեռք

---

49 В. Г. Луконин, Культура..., էջ 108։

50 Brian Mac Dermot, The Conversion of Armenia in 294 A.D. („Revue des etudes Armeniennes", VII, 1970, էջ 284)։ Մակեդերմոտը անիշխանության շրջանը հաշվում է Շապուհի գահակալության վերջին տարիներից մինչև 293 թ.։ Նրանցով՝ 237—287 թթ. (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 2, էջ 68)։

51 SHA, XXVIII, XVII, 4.

52 SHA, XXXVIII, XII, 4.

բերել դրանք»[53]։ Այդպիսի նամակ նա չէր հղի արքայից արքային։ Դա չափազանց կլիներ։ Այս նամակում լրիվ արտահայտված են Հայաստանի նկատմամբ կայսեր վերաբերմունքը և քաղաքական նկատառումները։ Նա փաստորեն չի ընդունում Ներսեհի գահակալական իրավունքները։

«Յունաց թագաւորեաց Պրոբոս և խաղաղութիւն արարեալ ընդ Արտաշրի՝ բաժանէ զաշխարհս, տահմանադրութեամբ փոսս գործելով»[54],— գրում է Խորենացին։

Որ Պրոբոսը պարսից արքայից արքայի հետ խաղաղություն է կնքել, համապատասխանում է արտաքին աղբյուրների տվյալներին, բայց Խորենացու «բաժանէ զաշխարհս» արտահայտությունը Պրոբոսին չի վերաբերում։ Ագաթանգեղոսը պատմելով, որ Տրդատին դայակները փախցրին «ի դուռն կայսեր ի կողմանս Յունաց», գրում է. «Եւ զերկիրն Հայոց այնուհետև եկեալ արքային Պարսից յիւր անուն զտեղիսն անուանէր, և զզօրսն Յունաց փախստական արարեալ հալածական տանէին մինչև ի սահմանս Յունաց։ Վիհս փոսացուցեալ սահմանս հաստատէին»[55]։ Ագաթանգեղոսի այս հաղորդումը, որ անդեմ է, Խորենացին կապում է Պրոբոսի պայմանագրության հետ։ Խաղաղությամբ Պրոբոսը միայն պահպանել է եղած դրությունը։ Դա հուշում է այն, որ արդեն 262 թ. վերադառնում է Արևելք, Պարսկաստանի դեմ։

Այն հանգամանքը, որ Ներսեհի կառավարման ժամանակ Հայաստանը փորձել է կայսեր հետ ինքնուրույն կապ հաստատել, ցույց է տալիս որոշ քաղաքական անկախություն։ Դա մոտավորապես հիշեցնում է վաղ շրջանի Արշակունյաց Հայաստանը։ Չնայած միևնույն դինաստիան էր, բայց Հայաստանը ներկայացնում էր առանձին պետականություն։

Անիշխանության շրջանի մասին («ի ժամանակս անիշխանութեան») Խորենացին գրում է. «Իսկ Արտաշրի գեղեցկապէս յարդարէալ զաշխարհս Հայոց՝ ի կարգ առաջին հաստատէր։ Նա և զԱրշակունիսն, զմեկուսացեալսն ի թագէն Ի. յԱյրարատն **բնակելոյ, կարգէ** ի նոյն տեղիս մտիւք և ոճկօք» (Բ—Հէ)։ Խոսքը վերաբերում է Սասանյան Որմիզդ-Արտաշիրին, թե Ներսեհին, որ նրա հաջորդն էր հայկական գահի վրա, բայց նկատենք, որ «ի կարգ առաջին հաստատէր», այսինքն, պահպանում է ինչպես որ էր Արշակունյաց ժամանակ։

Խաղաղություն կնքելով Պարսկաստանի հետ, Պրոբոսը գնում է Թրակիա։ Հռոմը չի ուզում Հայաստանի նկատմամբ ոչ մի պարտավորություն վերցնել. Դա, թերևս, հենց այն հավանական պահն է, երբ Տրդատը հռոմեական զորքերով ուղղվել է Հայաստան։ Կարելի է հավանական համարել նաև, որ Տրդատին 275 թ. Հայաստան է ուղարկել հենց Ավրելիանոսը։ Նրան հռոմեական զորքերով Պարսկաստանի դեմ հանելը համապատասխանում էր կայսեր շահերին։ Ավրելիանոսը կրում է նաև Լիկինիոս անունը, իսկ Տրդատը, ինչպես հայտնի է, ապաստան էր գտել Լիկինոսի մոտ, որ կարող էր հենց Ավրելիանոսը լինել։

Տիգրանակերտի արձանագրությունը, սակայն, այս դեպքերին չի կարող վերաբերել։ Այնտեղ արքայից արքան թագավորին հանձնում է քաղաքը առանց

---

53 SHA, XXVIII, XVII, 5։
54 Խորենացի, Բ—Հէ։
55 Ագաթ., Գ—36։

ընդհարման և, հասկանալի է, նրան ճանաչում իբրև Հայաստանի տիրակալ։ Իսկ Ագաթանգեղոսը և Խորենացին վկայում են, որ Տրդատը Հայաստան մտավ «մեծաւ զորու» (Խորենացի)։ Նա աչքի է ընկնում հռոմեացիների մոտ, և կայսրը ուղարկում է Հայաստան. «Գումարեաց ի ձեռս նորա զօրս բազումս յօգնականութիւն նմա և արձակեաց յիւրական աշխարհն հայոց» (Ագաթանգեղոս)։

Արձանագրության մեջ խոսքը վերաբերում է ինչ-որ հաշտության կամ խաղաղ վիճակի, բայց Պրոբոսի կողմից Տրդատին Հայաստանի դեմ ուղղելը հաշտության հետ ոչ մի կապ չունի։ «Խաղաց գնաց թագաւորն ի կողմանս Հայոց. և եկն եգիտ սնդ զօրս բազումս Պարսից, զի զաշխարհն յինքեանս գրաւեալ էին ի ծառայութիւն,— գրում է Ագաթանգեղոսը,— զբազումս կոտորէր, և զբազումս փախստականս արարեալ ի կողմանս Պարսից արկանէր. և զհայրենեացն տէրութիւն յինքն նուաճեաց, և զօրացաւ ի վերայ սահմանաց նորա»[56]։

«Տրդատ Գ-ի վերադարձի ու թագավորման մասին Հայաստանում հայտնի է խիստ կարևոր մի աղբյուր՝ Ֆարկին—Տիգրանակերտ քաղաքի պարսպի վրա գտնված հունարեն արձանագրությունը»[57],— գրում է Մանանդյանը, բայց չի նշում, թե ինչով է այն կարևոր և ինչպես է առնչվում Տրդատ III-ի վերադարձի և թագավորման հետ։ Նա արձանագրությունը վերագրում է 298 թ. հաշտությանը, գրելով. «Տրդատ Գ-ի այս արձանագրության ժամանակը պետք է ենթադրել երրորդ դարի վերջերում, հավանորեն 298 թվին»։ Կարծում ենք, որ արձանագրությունը դրան ևս չի վերաբերում։ 297 թ. հաշտությունը հռոմեացիների կողմից Ներսեհի դեմ Մեծ Հայքում[58] տարած հաղթանակի հետևանքն էր, իսկ Փավստոս Բուզանդի վկայությամբ՝ Բասենում («ի գաւառին Բասենոյ ի գիւղն, որ անուանեալ կոչի Ոսխայ»)[59], բայց արձանագրության մեջ տեղի ունեցող դեպքերը ինչ-որ ձևով կապվում են Նեկրայի հետ, որ կարելի է փնտրել Մեծ Հայքից դուրս, կամ, թերևս, նրա հարավ-արևմտյան սահմաններին[60]։ Առհասարակ 298 թ., որ առաջարկում է Մանանդյանը, պատմական այդ ընթացքի մեջ Տրդատի թագադրության ամենահարմար պահը չէ։ Սեբեոսի համաձայն, Դիոկղետիանոսը ծիրանի է հագել 261 թ., իսկ Տրդատը՝ նրա 15-րդ տարում՝ 275-ին, որ ընկնում է Ավրելիանոսի և Պրոբոսի ժամանակները։ Ինչ վերաբերում է հունա-հռոմեական աղբյուրներին, դրանք ևս այդպիսի հիմքեր չեն տալիս։

1. Ներսեհը 293 թ. ժառանգելով արքայից արքայի գահը, անմիջապես պատրաստվում է հռոմեացիների դեմ պատերազմի. «Ներսեհը նախ հռոմեական իրավունքի տակ գտնվող Հայաստանը գրավեց»,—նկատում է Ամմիանոսը։ Ուրեմն մինչ այդ, մինչ 295 թ. (Ներսեհը հռոմեացիների դեմ պատերազմ է սկսել 295 թ.) Հայաստանը հռոմեական էր։ Ավրելիոս Վիկտորն ասում է, որ Գալերիոսը Ներսեհի դեմ պատերազմի վայր ընտրեց Հայաստանը՝ «որն

---

56 Ագաթ., Դ—47։

57 Մանանդյան, Քննական..., էջ 120։

58 Eutropius, Breviarium, IX, 24—25; Rufus Festus, Breviarium, XXV; Aurelius Victor, Caesares, XXXIX.

59 «Փավստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1914, էջ 79։

60 Ս. Տ. Երեմյանը կարծում է, որ դա կարող է լինել Արշամաշատը, որ արաբները կոչում են Նեչրա կամ Նաչարան։

ամուր հենարան է և հաղթության համար ավելի ճիշտ ճանապարհ»։ Դա նույնպես հուշում է, թե պատերազմից առաջ Հայաստանը հռոմեական էր կամ, թեկուզ միայն, հակված էր դեպի նա։ Դրան գալիս է լրացնելու Ռուփուս Ֆեստուսի հաղորդումը։ Խոսելով Գալերիոսի հաղթանակի մասին, Ֆեստուսը գրում է. «Միջագետքը հինգ Անդրտիգրիսյան երկրների հետ նրանք ետ տվեցին։ Խաղաղություն կնքվեց և շարունակվում է մինչև մեր օրերը»։ Մեծ Հայքի մասին խոսք չկա, որ ետ են տվել, որովհետև այն արդեն պարսիկների ձեռքին չէր[61]։ Սակայն կար Տրդատի դահակալման, և պետք չէր սպասել 297 թ. Հայաստանի վերադրավմանը։

2. Հաշտության պայմանները կարող էին ավելի ծանր լինել պարտված երկրի համար, բայց Դիոկղետիանոսը զիջողություն է ցուցաբերում[62]։ Այդ պայմանների մասին ավելի մանրամասն տեղեկանում ենք VI դարի պատմիչ Պետրոս Պատրիկիոսից։ «Դեսպանության գլխավոր դրույթները հետևյալներն էին. Արևելքում հռոմեացիներին են պատկանելու Ինդիլենեն, Ծոփքի, Աղձնիքի, Կորդուքի և Ծավդեքի հետ միասին, Տիգրիսը լինելու է երկու երկրների սահմանը, Միդիայի սահմանին ընկած Զինթ ամրոցը լինելու է Հայաստանի սահմանը, Իբերիայի թագավորը իշխանության նշաններ պետք է ստանա հռոմեացիներից, Արևելքում առևտրական հարաբերությունների կետը պետք է լինի Տիգբոնը, որ գտնվում է Տիգրիսի ափին»[63]։ Այստեղ բավականաչափ խոսք կա Հայաստանի մասին, և եթե իսկապես Տրդատի թագադրության հարց լիներ, կամ նրա իշխանությունը ճանաչելու, անպատճառ կարտահայտվեր պայմանագրի մեջ, ինչպես, ասենք, իբերների համար։

3. Տրդատի թագադրությունը կարևոր իրադարձություն էր. նախ՝ մեծ ընդմիջումից հետո Արշակունիները վերականգնում են իրենց դինաստիական իրավունքները և ապա՝ Տրդատն էր, որ պետական աստիճանի բարձրացրեց քրիստոնեությունը։ Խիստ կարևոր էր և 297 թ. Գալերիոսի հաղթանակը, որով սկիզբ դրվեց շուրջ քառասունամյա խաղաղության։ Եթե Տրդատի թագադրությունը կապված լիներ Գալերիոսի հաղթանակի հետ, ապա դա չէր կարող մոռացվել։ Ե՛վ ավանդությունը, և՛ պատմությունը Տրդատի թագավորելը կապում են բոլորովին այլ դեպքի հետ, իսկ Գալերիոսի հաղթանակը սնունդ է տվել ուրիշ զրույցի, որ Տրդատի հետ չի առնչվում[64]։

4. Եվ, վերջապես, համաձայն հայկական աղբյուրների, Տրդատը տիրեց կահին, մարտնչելով պարսիկների դեմ, «գՀայրենեաց տէրութիւն յինքն նուաճեաց» (Ագաթանգեղոս)։ Նա հռոմեական զորքերով Հայաստան է գալիս մենակ, իսկ 297 թ. համար դա բացառվում է։ Գալերիոսը, որ Դիոկղետիանոսի կայսերակիցն էր, ինքն է առաջնորդել հռոմեական լեգեոնները և տարել նշա-

61 Տե՛ս Н. Адонц. Фауст..., էջ 239։ Այս բոլոր հաղորդումները բնագրով և ռուսերեն թարգմանությամբ տե՛ս Ն. Ադոնցի հոդվածում («Христианский Восток», т. VI. 1922, էջ 235—272)։

62 «Հաղթանակն այնքան նշանակալից էր, որ եթե Վալերիանոսը (Դիոկղետիանոսը), որի հրամանով էր ամեն ինչ կատարվում, չհակառակվեր, անհասկանալի պատճառով, ապա հռոմեական իշխանությունը կտարածվեր նոր նահանգի վրա» (Aur. Victor. De Caesaribus, XXXI (տե՛ս „Христианский Восток", էջ 237)։

63 Excerpta Petri Patricii, Ad gentes c-III (տե՛ս Христианский Восток, էջ 244—245),

64 Տե՛ս Փավստոս Բուզանդ, Գ—ԻԿ, էջ 77—80։

նավոր հաղթանակը։ Դա հարազատորեն արտացոլված է հայկական գրույցում և չէր կարող վերագրվել Տրդատին։

Ինչպես տեսնում ենք, 297/8 թ. դաշնագրության հանգամանքները չեն առնչվում Ֆարկին-Տիգրանակերտի արձանագրության հետ։

Այժմ քննենք երրորդ հնարավորությունը։

Աղբյուրներից հավաստիանում ենք, որ Դիոկղետիանոսը խաղաղ ճանապարհով հռոմեական դարձրեց Միջագետքը և Հայաստանը։ Արձանագրության մեջ դա հաստատվում է։ Արքայից արքան Տրդատին հղած մի հրովարտակով նրան է տալիս Տիգրանակերտը և ուրիշ քաղաքներ։ Դա Արշակունի դահակալի համար «անսպասելի» էր։ Նշանակում է, այդ քայլը հարկադրանքով չէր թելադրված։ Թագավորը հարգալիր և երախտագիտությամբ է խոսում և՛ հռոմեացիների, և՛ պարսից արքայի մասին, որին ընթեռնելի հատվածներում երեք անգամ կոչում է «աստված արքայից արքա» («Որպեսզի մենք երախտապարտ երևանք հռոմեացիների նկատմամբ և պարսից արքայից արքայի, որպեսզի...»)։ Դա ինքնին ցույց է տալիս, որ նրանք հանդես են գալիս որպես հավասար կողմեր։ Եթե Տիգրանակերտի և ուրիշ քաղաքների հանձնումը 297 թ. դաշնագրության հետևանք լիներ, հայ թագավորը այդպիսի երախտագիտություն չէր արտահայտի պարսից արքայի նկատմամբ, որովհետև նա պարտված կողմն էր և քաղաքները գիջում էր հարկադրաբար։ Իսկ արքայի անսպասելի նամակը ամենից առաջ հրովարտակ է Տրդատի թագավորական ստատուսը ճանաչելու, որ նա հրամայում է հյուսիսային դարպասի վրա փորագրել. «Մենք առավել գիտության համար հրամայեցինք գրերը»։ Արձանագրությունը հաստատում է, որ դաշինք կամ պայմանավորվածություն է եղել պարսիկների և հռոմեացիների միջև և երկուստեք ճանաչվել են Տրդատի իրավունքները և որ դա կարող էր լինել Դիոկղետիանոսի առաջին շրջանում (Եվմենիոս) կամ «յերրորդ ամի» (Խորենացի)։ Պատմագրությունը դա վերագրում է Դիոկղետիանոսի անձնական հատկություններին։ Դիոկղետիանոսը, անշուշտ, խոհամիտ քաղաքագետ էր, սակայն երկու մեծ տերությունների միջև նման խնդիրներ լուծելու համար պետք է ավելի մեծ բան։ Կարոսի հաղթանակը շատ նպաստավոր հանգամանք էր, որից չկարողացավ օգտվել նրա հաջորդը, բայց Կարոսի մահից հետո նվաճված երկրները ետ էին դարձվել, և Սասանյան տիրակալը հեշտությամբ չէր գիջի։

Այստեղ դեր ունեն այլ նկատառումներ։ Վահրամ II-ը նոր էր հաղթահարել իր կնոջ եղբոր և Խորասանի արքա Որմիզդի դահակալական նկրտումները, երբ գալիս է դաշնակցելու Դիոկղետիանոսի հետ։ Պարթևների ժամանակ հայ գահակալը հաշվվում էր երկրորդը. «Զի որ Հայոց թագաւոր էր, նա էր երկրորդ Պարսից տէրութեանն»[65]։ Սասանյանները ուզում էին պահպանել միևնույն ստատուսը։ Գահաժառանգը կրում էր Հայոց թագավոր տիտղոսը, եթե, նույնիսկ, չուներ իրական իշխանություն։ Այդպես էր Որմիզդ-Արտաշիրը մինչև 261 թ., որի գեմ պայքարել է Խոսրովը։ Արտաշիրն ուներ սեփական Կրակ (Հրատն) և հաջորդեց իր հորը[66]։ Նրա փոխարեն Հայաստան է մեկնում ներ-

---

65 Ագաթ., II—18։

66 «Գահի նկատմամբ Որմիզդ Արտաշիրի իրավունքը ոչ մեկի կողմից չվիճարկվեց» (Р. Фрай. Наследие Ирана, М., 1972, էջ 298)։

սեհը։ Նա, ինչպես հայտնի է KZ արձանագրությունից, նույնպես ատրուշան ուներ, ուրեմն՝ առանձնակի դիրք և երկրորդն էր «տէրութեանն Պարսից»։ Բայց Որմիզդ-Արտաշիրին գահի վրա հաջորդում են Վահրամ I-ը (274—276), որի համար KZ արձանագրության մեջ սեփական Կրակ (Հրատն) չի հիշվում, Վահրամ II-ը (276—293) և Վահրամ III-ը (293), իսկ Ներսեհը մնում է դուրս։ Անշուշտ, դա չէր կարող բնական դիտվել հենց Ներսեհի կողմից։ Ծավալվում է պայքար հավակնորդի և գահակալների միջև։ Ներսեհը այդ պայքարում մեծ ջանքեր է գործադրել և կիրք։ Պայկուլիի արձանագրության մեջ նա իրեն կոչում է արքայից արքա, երբ դեռ Հայաստանում էր և չէր նստել իր նախնիների գահին։ Մտածել, որ մինչ այդ, այսինքն՝ մինչ 293 թ., ինչ-որ ժամանակ նա կրել է պարսից թա՞գը։ Ո՛չ։ Նա իրեն այդպես է կոչում, որովհետև չի ճանաչում Վահրամ III-ին իբրև գահակալ։ Արձանագրությունը հենց այդ ոգին ունի։ Կարծես գահին օտարներ էին տիրացել, իսկ նա գնում է ժառանգելու իր հայրերից. «Կարող է նորին մեծություն արքայից արքան Հայաստանից գնալ Իրանշահը և ընդունել աստվածներից իր նախնիների պատիվը, գահը, իրավունքը և իշխանությունը»։ Բայց նա հենց ասում է, որ գահը իրեն կտակել է ուղղակի իր հայրը՝ Շապուհը։ «Շապուհը... կտակեց, որպեսզի Իրանշահի վրա նա տիրակալ լինի»,— ասված է արձանագրության մեջ։ Եվ վերջապես՝ նրա միջոցով է ժառանգության աստվածներին զոհ տրվում Վահրամ III-ը, որ իր եղբոր թոռն էր։

Կա մի շատ բնորոշ փաստ։ Ռիշապուրի արձանագրությունից Ներսեհը ջնջել է տալիս Վահրամ I-ի անունը և իրենը գրում։ Այդ նշանակում է, որ Որմիզդ-Արտաշիրից հետո ուղիղ գծով նա է իրեն համարում օրինական ժառանգորդ։ Իսկ երբ դեռ միայն Հայոց թագավոր տիտղոսն էր կրում, թողարկել է դրամներ, որոնց վրա իր պատկերն է, գլխին՝ Վահրամ II-ի թագը[67]։ Դա բացահայտ արտահայտում էր այն միտքը, թե՝ թագի իսկական տերը Վահրամը չէ։

Հայաստանի որոշ անկախությունը և պարսիկների հետ շահագրգռությունների տարբերությունը ընդգծվում էր Ներսեհի և Տիզբոնի գահակալների միջև եղած հակասության պայմաններում։ Ներսեհը փորձում էր հենվել հայ Արշակունիների և ավագանու վրա, օգտվելով նրանց և պարսիկների միջև եղած հակասությունից, որ ընդունի «իր նախնիների պատիվն ու գահը»։ Ինչպես տեսնում ենք, չնայած գահակալը Սասանյան էր, Հայաստանը, որի թագավորը կարող էր սեպարատ հաշտություն առաջարկել Հռոմին, Պարսկաստանի համար մնում էր վտանգավոր։ Հենց այդ հանգամանքից մղված Վահրամ II-ը որոշում է քաղաքական ասպարեզ տալ Տրդատին և բարեկամություն հաստատել նրա հետ։ Տրդատը կարող էր պարթևական ուժերը հանել Ներսեհի դեմ։ Որ Վահրամը այդպիսի նկրտումներ է ունեցել, ցույց է տալիս Տիգրանակերտի արձանագրությունը։ Վահրամ II-ը Տրդատին ուղղած հրովարտակով ճանաչում է նրան իբրև Հայաստանի թագավոր, իսկ Տրդատը երախտապարտ է և կոչում է նրան «աստված արքայից արքա»։ Արշակունիների պայքարը Սասանյան գահի համար դառնում է անվտանգ։

Ինչպես տեսնում ենք, Իրանի և Հռոմի միջև համաձայնությունը միայն Դիոկղետիանոսի ծառայությունը չէր։ Այն ելնում էր և Պարսկաստանի շահե-

67 Луконин, Культура.... էջ 180։

ից[68]։ Ագաթանգեղոսն ասում է, որ Տրդատը 13 տարի, «իբրև ամս երեքտասան» կռվում էր Պարսկաստանի դեմ։ Եթե Տրդատը դահ է բարձրացել Դիոկղետիանոսի և Վահրամ II-ի համաձայնությամբ կամ 298 թ. դաշինքով, ապա դժվար է տեղադրել այդ թիվը։ Տեղադրման այդպիսի փորձ անում է Տաշյանը. «Խաղաղություն կնքելեն ետքն ալ կրնար Պարսից արքայն գրգռել զՏրդատ և այս վերջինը մանր արշավանքներ ընել յԱտրպատական ևն»։ Նա նկատի ունի Դիոկղետիանոսի առաջին տարիների խաղաղությունը։ Այժմ պարզվում է, որ Տրդատը պայքարել է Պարսկաստանի, բայց ոչ Վահրամ II-ի, այլ Ներսեհի դեմ։ Այդ պայքարը թերևս խրախուսվում էր հենց իրեն՝ արքայից-արքայի կողմից։

Այժմ Ագաթանգեղոսի թիվը (13) հեշտությամբ կարելի է տեղակայել։ Ըստ Սեբեոսի, Տրդատը Հայաստան է գալիս 275 թ., իսկ 286/7 թ. ճանաչվում է իբրև հայոց թագավոր։ 275-ից մինչև 287-ը, ուղիղ 13 տարի է։ Այդպիսով, մերժված 13-ը շատ կարևոր ծառայություն է մատուցում. Տրդատի գահակալության մասին նորից հավաստվում է պատմիչի ժամանակագրական ստուգությունը։

Ինչպես տեսանք, Ներսեհը Հայաստանի թագավոր տիտղոսը կրեց 275/6 թ.։ 293 թ. նա Հայաստանում էր, երբ սուրհանդակ եկավ իր մոտ։ 295 թ. իբրև արքայից արքա, Ներսեհը վերադառնում է Հայաստան, որը, Ամմիանոսի և մյուս հունա-հռոմեական պատմիչների վկայությամբ, չէր գտնվում պարսկական տիրապետության տակ։ Ամմիանոսի հաղորդումից չի երևում, թե 293—295 թթ. միջև այն հռոմեական դարձավ։

Հայաստանը հռոմեական էր և՛ 293 թ. առաջ։ 293 թ. Ներսեհը ոչ թե տիրում էր Հայաստանին, այլ պայքարում՝ Հայաստանը նվաճելու համար, հենվելով հայ ազատական առանձին շերտերի վրա։ Բարձրանալով Տիզբոնի գահը, գրեթե անմիջապես նա շարժվում է Հայաստան։ Դա նկատել է տալիս, որ Ներսեհը իբրև արքայից արքա, ուզում էր իր պայքարը հաղթական ավարտի հասցնել, բայց հաջողություն չունեցավ։

Գալերիոսը 311 թ. հրովարտակում իրեն կոչում է «վեց անգամ հայերին հաղթող»[69]։ Մնում է անհասկանալի, թե ե՞րբ են եղել այդ հաղթանակները։ Աննինսկին և Մանանդյանը տալիս են այսպիսի բացատրություն. «Հայերի դեմ վեց հաղթանակ կարող էր լինել միայն 303 թ. առաջ և, ուղղակի, 297—302 թթ. միջև։ Եթե Գալերիոսին պետք եղավ տանել վեց հաղթանակ, ցույց է տալիս, որ հայերը եռանդուն պաշտպանվում էին Հռոմի դեմ»[70]։ Թե ինչու Գալերիոսի հաղթանակները տեղակայվեցին 297—302 թթ. միջև, դժվար է հասկանալ։

---

68 Աննինսկին. Մանանդյանը և ուրիշներ հայերի և պարսիկների քաղաքական հարաբերությունների մեջ հակված են տեսնելու երկու կողմ միայն. Արշակունիներ և Սասանյաններ, որոնք կանգնած են իրար դեմ։ Կարծում ենք, որ այդ պատճառով իրադարձությունների պատկերը խաթարվում է։

69 Եվսեբիոս Կեսարացի. Եկեղեցական պատմություն, Ը—ԺԸ։

70 Анненский. Древние... էջ 61. տե՛ս նաև Հ. Մանանդյան, Քննական.... հատ. 2, էջ 120։ «Այսպիսով,— եզրակացնում է Աննինսկին.— հայերը պայքարել են հայկական թագավորության այն թեկնածուի դեմ, որը հետագայում դարձավ ամենանշանավոր հայ թագավորը և հայ ժողովրդի մեծագույն բարեգործը։ Այդ անհաջող օպոզիցիան, իհարկե, չէր կարող հաճելի լինել հայերին և բոլորովին զարմանալի չէ, որ նրանք ձգտել են մոռանալ այդ մասին» և այլն։

296 թ., արդեն արքայից արքա, Ներսեհը Գալերիոսից այնպիսի պարտություն կրեց, որ պատրաստ էր ամեն պայմանների, և մտածել, թե այլևս հնարավոր էր հայերի կամ պարսիկների կողմից դիմադրություն, այն էլ վեց անգամ, անկարելի է։ Խաղաղության դաշինքը տևեց 40 տարի և ոչ թե խախտվեց անմիջապես։ Հրովարտակում Գալերիոսը նկատի ուներ Ներսեհին (որ կոչվում էր Հայաստանի մեծ թագավոր), հնարավոր է՝ նաև, Հայաստանի արևելյան մասում ինչ-որ մի շրջան, որը դեռ գտնվում էր Ներսեհի իշխանության տակ։ Գալերիոսի վեց հաղթանակները պետք է փնտրել 287—297 թթ. միջև։ Հռոմեացիները Ներսեհի հետ ոչ մի պայմանավորվածություն չունեին և կարող էին աղատ լինել իրենց քայլերի մեջ։ Դիոկղետիանոսի և Վահրամ II-ի համաձայնությունը չէր խախտվում։

Լուկոնինը ճիշտ է նկատում, որ Ներսեհի համար «Հայաստանի մեծ թագավոր» տիտղոսը «ավելի շատ հավակնություն էր, քան ուներ իրական արժեք»։ «Հայաստանը դեռ պետք էր նվաճել»,— գրում է նա։ Ներսեհին էր պատկանում Ասորեստանի մեծ մասը, նրա արքայանիստ քաղաքը Շիզն էր[71] և ոչ՝ Արտաշատը կամ Վաղարշապատը։

Երրորդ դարը, որ Արևելքում նշանավորվեց Սասանյան դինաստիայի հաստատմամբ, Արշակունիների Հայաստանի համար պայքարի մի շրջան էր, որով պայմանավորվեց նրա հետագա քաղաքական ուղին։ Չորրորդը սկսվում է խաղաղությամբ, որ տևեց մինչև 338 թ.։ Քրիստոնեության ընդունումը Հայաստանում և ճանաչումը իբրև պետական կրոն, որ կարևոր դեր խաղաց, կապվում է Տրդատ III-ի անվան հետ։

Եթե համառոտակի փորձենք տալ III դարի երկրորդ կեսի կարևոր դեպքերի ժամանակագրությունը, ապա այն կստանա այսպիսի տեսք.

252/3.— Տրդատ II-ը փախչում է հռոմեացիների մոտ, իսկ նրա որդիները մնում են Հայաստանում։

252/3-ից մինչև 257/8.—Հայաստանի գահի վրա է Խոսրովը՝ Տրդատ II-ի որդին։

257/8.—Խոսրովը դավադրաբար սպանվում է իր եղբայրների կամ պարթև Անակի կողմից։

257/8—261.— Երկիրը կառավարում է Տրդատ III-ի խնամակալ Արտավազդը, հավանաբար՝ Արտավազդ Մանդակունին։

261—286/7.— «Ժամանակ անիշխանության», ըստ Խորենացու։

261—272 (273).— Որմիզդ-Արտաշիր Սասանյանը իբրև «Հայաստանի մեծ թագավոր»։

272(3)—274.— Իշխում է Շապուհը՝ Որմիզդ-Արտաշիրի որդին։

275—286/7.— Ներսեհ Սասանյանը իբրև «Հայաստանի մեծ թագավոր»։ (275/6-ին Տրդատ III-ը հռոմեական զորքերով գալիս է Հայաստան)։

286/7.— Տրդատ III-ը հռոմեացիների և պարսիկների կողմից ճանաչվում է իբրև Հայաստանի թագավոր.

286/7—297.— Ներսեհը փորձում է վերահաստատել իր իշխանությունը Հայաստանում։

297.— Գալերիոսի հաղթանակը Ներսեհի դեմ և Հայաստանի սահմանների կարգավորումը։ Սկսվում է քառասնամյա խաղաղության շրջանը։

---

71 Луконин, Культура..., էջ 111։

АРМЕНИЯ И ПЕРВЫЕ САСАНИДЫ

Доктор филол. наук А. А. МАРТИРОСЯН

(Резюме)

История армянского народа второй половины третьего века изучена недостаточно. Имеются разногласия и много нерешенных вопросов, в частности, в области хронологии. На основании греко-римских и армянских источников, а также данных персидских надписей в статье прослеживается политическая история армянского народа и предлагается нижеследующая новая хронологическая последовательность событий во второй половине III в.:

252/3.— Трдат II бежит к римлянам, а его сыновья остаются в Армении.

252/3—257/8.— На армянском престоле сын Трдата II—Хосров.

257/8.— Хосрова изменнически убивают его братья либо парфянин Анак.

257/8—261.— Страной правит опекун Трдата III Артавазд, возможно, Артавазд Мандакуни.

261—286/7.— По Хоренаци, «Период безначалия».

261—272(273).— Хормизд-Арташир Сасанид—«Великий царь Армении».

272/3—274 — Царствует Шапур, сын Хормизда-Арташира.

275—286/7.— Нарсе Сасанид—«Великий царь Армении». (В 275/6 г. Трдат III с римским войском прибывает в Армению).

286/7.— Трдат III признан римлянами и персами армянским царем.

286/7—297.— Нарсе пытается восстановить свое владычество в Армении.

297.— Победа Галерия над Нарсе и установление границ Армении. Начало сорокалетнего мирного периода.